

**ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ
(1996—1997 թթ.)**

Ազգային գիտաժողով Տրիեստում. 1996 թ. սեպտեմբերի 19—20-ը Տրիեստի համալսարանի հովանավորությամբ կայացել է միջհամալսարանական ազգային XIV գիտաժողովը:

Գիտաժողովին մասնակցում էին Բոլոնիայի հնագիտության և միջնադարադիտության բաժինները, Զենովայի լեզվաազգագրական գիտությունների, Նեապոլի՝ Աֆրիկայի և արաբական երկրների ուսումնասիրությունների Արևելյան ինստիտուտի, Պադուայի հնագույն դիալեկտների, Հռոմի համալսարանի Հին աշխարհի վերաբերյալ ուսումնասիրությունների, Ֆլորենցիայի եվրասիական ուսումնասիրությունների ինստիտուտները և Միլանի համալսարանի լեզվաբանության բաժինը:

Գիտաժողովի թեման էր «Դասական ժառանգության տարածումը անտիկ դարաշրջանի վերջում և միջնադարում: Ժառանգության ձևերը և կառուցվածքը»:

Գիտաժողովում պրոֆ. Բոլոնյեզին հայտնել է, որ առաջիկայում նշվելու է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյա տարելիցը: Այս դարձը, իրոք, պետականորեն իրականացվեց և ոչ թե Հայաստանում սոսկ իբրև քրիստոնեության առկայություն: Էր նշանակում, ինչպես եղել է քրիստոնեական աշխարհի մյուս երկրների համար՝ 313 թ., Կոստանդինի վճռից հետո: Այս կարևոր իրողությունը, նկատել է պրոֆ. Բոլոնյեզին, հաշվի է առնվելու գիտաժողովում ներկայացված հայագիտական հետազոտություններում:

Գիտաժողովի հայ գիտական բաժնում ամիլանյան դպրոցի մասնակցությամբ և Միլանի, Բոլոնիայի, Զինեռայի գիտնականների արևելագիտական ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվել էին բանասիրական և ղեկավարված պատկերագրական բնագավառի արևելագիտական ղեկուցումներ, որոնք հաճախ համընկնում էին հայ-հունական համեմատական վերլուծություններին: Ռ. Սգարբին (Միլան) միջազգային լեզվաբանությունը նվիրված իր ելույթում ուշադրություն դարձրեց նրան, որ հայերենի դարգացումը նկատելի է Գրիգոր Նազիանզացու ժամանակից ազդեցության ազդեցության տարբերակում, մասնավորապես հունարեն բաղադրյալ բառերի թափանցության օրինակներով: Վ. Կալոգրեարին (Զինեռա) ներկայացրել է ռեալիզմի Պաուլ Է Տեկլայի հայերեն տարբերակի հաջողվածության ապացույցները, իսկ Մ. Բարսը (Բոլոնիա) ի հատ է բերել դասական ձևերի առկայությունը հայկական վաղադարձության ընտիր նմուշներում:

Գիտաժողովի ուշագրավ ղեկուցողներից էր Գ. Ուլուհոջյանը (Բոլոնիայի համալսարան), որը ելույթ ունեցավ հայկական ձևագրերի ամբողջականության թեմայով: Տվյալ հիմնահարցի համար այդ ղեկուցումն ուներ հիմնադար նշանակություն:

Ներկայացված լեզվաբանական բաղադրյալները, ինչպես նաև լայն ընդգրկումները պայմանավորված էին նրանով, որ գիտաժողովի սերտագործ հավաքված էր միջազգային ակադեմիկոսներից, որոնք նոր կոնսոլիդացիոն ուսումնասիրում ավելի սերտ համագործակցության շնորհիվ:

Հայագիտությանը Բոլոնիայում: Բոլոնիայի Գիտությունների համալսարանի բանասիրության և փիլիսոփայության ֆակուլտետների հովանավորությամբ ակտիվացել է հառց լեզվի և գրականության ուսուցումը՝ պրոֆ. Գ. Ուլուհոջյանի ղեկավարությամբ, որ իրականացնում է պատմական բանասիրության և աբելեթի պատմության բաժնի ուսանողների համար: Առաջին տարին աշն ունի նախապատրաստական բնույթ. բացի հայ մշակույթի տարբեր ուղղությունների դասավանդումից, ուսուցանվում է նաև զրաբառ, որի բերականության յուրացումը իրագործվում է V դ. ա. նախա տեքստերի ընթերցանությամբ, որոնք կապված են սկզբնական ժամանակաշրջանի քրիստոնեական Հայաստանի գրականության և պատմության հետ: Ուսուցման երկրորդ տարում հնարավոր է կատարել ընտրություն՝ ա) զրաբառի իմացության խորացում և ավելի բարդ տեքստերի ընթերցանություն՝ հատկապես ուշադրություն դարձնելով հունարենից հայերեն թարգմանության հիմնահարցերին (դասական ժամանակաշրջան), բ) ժամանակակից հայերենի ուսուցում (արևմտահայ և արևելահայ գրականություն): Դասական-

դուր չմնականում, այսպիսով, դարգանում է երկու ուղղությամբ՝ հայ մշակույթի ուսուցումը բնագործի միջոցով կամ բնագործի, որպես կանոն միջոց՝ հայկական վաղ միջնադարյան դասական ժառանգության լուրացման համար:

Հայագիտական գիտաժողով Տուրիքում, Ձենովայում և Լիվոռնոյում: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին էր նվիրված այս քաղաքներում 1997 թ. մարտի 5—11-ը տեղի ունեցած միջազգային գիտաժողովը՝ «Առ դուրս Իտալիա» խորագրով: Տուրիքում գիտաժողովը սկսվել է Կ. Ռոնարդիի ներածական խոսքով, ուղարկվել է հայ-իտալական պատմամշակութային, հոգևոր-կրոնական և առևտրատնտեսական հարաբերությունները՝ վաղնջական ժառանգություններից ի պէս: Հիշատակենք նաև Լեռնայի հետաքննարկող զեկուցումներով հանդես եկան Լ. Ջեթյանը (Վենետիկի համալսարան), Լ. Մանչյանը և Լ. Կոնստանտին (Տուրինի համալսարան), Մ. Սանդրին (Միլանի Պոլիտեխնիկական), Ս. Ռենդիկտոն (Տուրինի համալսարանի պատմական արխիվ), Կ. Ռոնարդին (Տուրինի Պոլիտեխնիկական), Զ. Ռոլոնդին (Միլանի Կաթոլիկական համալսարան):

Ձենովայում (մարտի 10) Լյուիթերի մեծ մասը նվիրված էր հայ-քրեոնական ազդեցություններին, Միլանում և Սարդինիայում հայ-իտալական կրոնական ու տնտեսական, Սարդինիայում՝ տնտեսական, մշակութային ու դիվանագիտական հարաբերությունների պատմությանը: Նորույններով էին հանդես գալիս Պ. Պերուլինոյի, Գ. Ուլուհոյանի, Զ. Կալկանյոյի, Վ. Փամբակյանի, Մ. Տեստիի և այլոց Լյուիթերները:

Լիվոռնոյում կայացած Լեոնարդոյի նստաշրջանում հայ-իտալական առևտրի ու ներքին կտրվածքով ուղարկված պատմամշակութային ծախքեր բացահայտվել են մասնագիտական Պիզայում և Լիվոռնոյում հայերի ներկայության, նրանց համայնքների կացության ու ճակատագրի, պաշտոնավարության, ինչպես և Արևմուտք-Արևելք փոխհարաբերություններում հայերի միջնորդավորող կապի մասին: Զեկուցումներով հանդես եկան Ս. Օտտենֆրուն (Ստասբուրգի համալսարան), Յ. Լ. Լադանան, Յ. Յիշերը (Պիզայի համալսարան), Ռ. Գեյցլին (Պիզայի Մանկավարժական ուսումնարան), Ա. Կաստան (Տուրինի Պոլիտեխնիկական) և Երիշները:

Գիտաժողովի կազմակերպմանը և դիտական բարձր մակարդակի ապահովմանը նպաստեց Լ. Ջեթյանի և Կ. Ռոնարդիի արդյունավետ ու տալիս զործունեությունը:

Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտից՝ Հ. Ավետյանը («Հայաստանի Առաջին հանրապետությունը և Իտալիան»), Ա. Խառատյանը («Հայ-իտալական մշակութային հարաբերությունները XIX դ. առևտրահայ մամուլում»), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտից՝ Ա. Ռոդյանը («Հայ մատենագրության մեջ պահպանված» սլավոնական համայնքները) և Պ. Զորայանը («Հայերի պաշտոնավարությունները Իտալիայում (XIII դ.)», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտից՝ Մ. Հասարայանը («Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրությունը իտալացի գիտնականների կողմից»):

Գիտաժողովի կազմակերպմանը և դիտական բարձր մակարդակի ապահովմանն անդադրադադունալիս հարկ է առանձնացնել Լ. Ջեթյանի և Կ. Ռոնարդիի՝ հիմնական արդյունավետ և տալիս վորից զործունեությունը:

Միջազգային գիտաժողով Հոռմում (Հոռմ, 25 սեպտեմբերի—նոյեմբերի, 26—27 սեպտեմբերի, 1997 թ.)՝ «Հուն հեղինակները Միջին և Մերձավոր արևելքի լեզուներով: Ալեքսանդրի զեկյաթ ինտրոդ Գիտաժողովին ազդեցող հայագիտական զեկուցումներով հանդես են եկել նաև Հայաստանի ներկայացուցիչները: Հ. Սիմոնյանը՝ «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», Ա. Մուսիխանյանը՝ «Ալեքսանդր Մեծը Մոմսի և Խորենացու «Հայոց պատմության» մեջ (Նրենի պետական համալսարան), Պ. Մուրադյանը (ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ)՝ «Կառքեղոն կամ Քաղկեդոն. Լեզրի պատմությունը» և Ս. Արևշատյանը (Մ. Մաշտոցի սենյակ): Հին ձեռագրերի ինստիտուտի՝ Պլատոնի «Երկխոսություններին» հիմ հայերեն թարգմանությունները ինտրոդ: Հայագիտական բնույթ ունեն հան Ս.-Մ. Լոմբարդիի—Գ. Ուլուհոյանի և Ռ. Շմիդտի զեկուցումները՝ «Աղեքսանդրի վեպի» հայկական տարբերակի վերաբերյալ, ինչպես նաև Զ. Բոլոնդինի և Ռ. Սկարբիի զեկուցումները միջնադարում հունարենից արված հայերեն թարգմանությունների մասին:

Իտալիայում հրատարակված հայագիտական երկեր: 1990-ական թթ. Իտալիայում լույս են տեսել մի շարք հայագիտական երկեր և թարգմանություններ հայ գրականությունից, որ վկայում է այդ երկրում հայագիտության զարգացման մասին: Ստորև բերվում է այդ հրատարակությունների ոչ լրիվ ցանկը:

1. Դ ա ն ի ե լ վ ա Ր ո լ ժ ա ն, Հացիկն երգը, թարգմ. Ա. Արսլան, և Հ. Մեջեթյան, Միլան, 1992:

2. Դ. վ ա Ր ո լ ժ ա ն—Ցորյանի ծովեր և այլ հայկական բանաստեղծություններ, խմբ. բաղիտ և ներածություն հեղինակ՝ Ա. Արսլան, թարգմանություններ՝ Ա. Արսլանի և Ա. Հ. Շիբակի, Միլան, 1995:

3. Կ. Մ ո լ ա ֆ յ ա ն—Մեծ եղեռն, Համառոտ պատմություն հայերի ցեղասպանության մասին, խմբագիր՝ Ա. Արսլան, Երաշխավորություններ՝ Մ. Նորգրիդի, հետգրություններ՝ Լ. Զեթյանի, նկարազարդված և խմբագրված՝ 1995 թ.:

4. Ե Ա ո ղ ռ ու նս Ի տալիս, Հայ վաճառականները և հոգևորականները Իտալիայի ճանապարհին, խմբագիր Լ. Զեթյան, Առաջաբաններ՝ ՀՀ ԳԱԱ ակադ. Վ. Բարխուդարյանի և Լ. Զեթյանի, Հոգրվածների ժողովածու, Պաղոա, 1996:

5. Հ. Կ ա զ ա ն չ յ ա ն—Ուր դրամ արծիճ, կես կգ պողպատ, կես լ յուղ, Հայ տղայի կյանքը և արկածները: Ս. Կազանչյանի և Ա. Քեչյանի խմբագրությամբ: Առաջաբաններ՝ Ա. Արսլանի, Պաղոա, 1995:

6. Ե զ ն ի կ Կ ո ղ բ ա ջ ի, Եղծ աղանդոց, ներածություններ, թարգմանություններ և խմբագրական ծանոթություններ Ա. Օրենդոյի Պիզա, 1996:

7. Վ. Օ հ ա ն յ ա ն, Բառարան Իտալերեն-հայերեն, Վենետիկ—ս. Ղազար, 1995:

8. Վ. Օ հ ա ն յ ա ն, Բառարան հայերեն-իտալերեն, Վենետիկ—ս. Ղազար, 1996:

ԳԼՅԱՆԻ Գ. ԳԵՂԱՄՅԱՆ